

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Մեւանի քաղաքապետարանի աշխատակազմին ներկայացրեց նորընտիր քաղաքապետ Սարգիս Մուրադյանին

05.11.2016

Նոյեմբերի 4 –ին Մեւանի քաղաքապետարանում հրավիրված խորհրդակցության ժամանակ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Մեւանի քաղաքապետարանի աշխատակազմին եւ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին ներկայացրեց Մեւանի նորընտիր քաղաքապետ Սարգիս Մուրադյանին: Մարզպետը նախ շնորհակալություն հայտնեց սեւանցիներին՝ ազատ կամարտահայտման եւ ՏԻՄ ընտրություններում ցուցաբերած ակտիվ մասնակցության համար, ապա հույս հայտնեց, որ նորընտիր քաղաքապետի գլխավորությամբ Մեւան քաղաքը կունենա նոր ձեռքբերումներ, զարգացման հաստատուն ճանապարհ: «Հոկտեմբերի 2-ին կայացած ընտրությունների արդյունքում ընտրողների բացարձակ մեծամասնությունը քվեարկեց Սարգիս Մուրադյանի օգտին: Հուսով եմ, որ նա իրականություն կդարձնի իր բոլոր նախընտրական խոստումները՝ արդարացնելով սեւանցիների ակնկալիքները եւ վստահությունը: Հաջողություն եմ մտադրում Սարգիս Մուրադյանին իր պատասխանատու աշխատանքում»,-ասաց մարզպետը: Քաղաքապետի պաշտոնն արդեն ստանձնած Սարգիս Մուրադյանը, հանդես գալով շնորհակալական խոսքով, վստահեցրեց, որ իր աշխատած ժամանակահատվածում կանի հնարավորը, որպեսզի իր ղեկավարած քաղաքը դառնա ավելի զարգացած ու բարեկեցիկ: «Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել սեւանցիներին՝ ինձ վստահության քվե տալու համար: Մեզ սպասում են կենսական նշանակության լուրջ ծրագրերի իրականացման նպատակներ, հազեցած աշխատանքային ժամանակահատված: Աշխատելու եմ բաց, թափանցիկ, նպատակամղված, որպեսզի կարողանամ կյանքի կոչել այն կարեւոր անելիքները, որոնք ներառված են եղել իմ նախընտրական ծրագրերում»,-նշեց Սարգիս Մուրադյանը: Պատասխանելով խորհրդակցության մասնակիցների տարաբնույթ հարցերին՝ մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը միաժամանակ վստահեցրեց, որ Հայաստանի Հանրապետությունում այս տարվա փետրվարից սկիզբ առած բարեփոխումները, որը նախաձեռնել է Նախագահ Սերժ Մարգարյանը, մեր երկիրը տանելու են նոր ձեռքբերումների, կայունության ու բարեկեցության ճանապարհով: «Սակայն այդ բարեփոխումները պահանջում են լարված աշխատանք, համագործակցություն կառավարման բոլոր օղակներում, հավատ ու վստահություն միմյանց հանդեպ: Կարծում եմ, որ 2017 թվականը եւ նրան հաջորդող տարիները Մեւան քաղաքի, մեր մարզի համար կլինեն զարգացման ու լուրջ ձեռքբերումների ժամանակներ»,-նշեց մարզպետը: